Թեմատիկ պլանավորում

Հայոց լեզու 9-րդ դասարան

Տարեկան 68 ժամ

Շաբաթական 2 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, տարեթիվ 2013թ.

Նպատակ	-Ներկայացնել հայերենի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները, բարդ մտքերը ձևակերպելու և տարբեր կերպով արտահայտելու հնարավորությունները -զարգացնել բազմաբնույթ և բարդ տեքստեր ընկալելու և կազմելու կարողությունները՝ շարահյուսական բազմազան կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ -զարգացնել ճանաչողական հմտությունները, համեմատել և տարբերել պարզ և բարդ նախադասությունները, տեսնել նմանություններն ու տարբերությունները, ընդհանրացնել -զարգացնել հաղորդակցական և ստեղծագործական կարողությունները՝ ազատ գործածել բարդ նախադասությունները, կարողանալ ընտրել դրանց տեսակը՝ կախված խոսքի ոճից և գործառական բնույթից -ներկայացնել բարդ համադասական և ստորադասական նախադասությունները - նպաստել ճանաչողական, հաղորդակցական կարողություններ զարգացմանը -ըմբռնել տալ ուղղակի խոսքի հաղորդակցական բնույթը, օգնել՝ հասկանալու խոսքի բովանդակությունը ճիշտ վերարտադրելու կարևորությունը

	ընկալել տալ գեղարվեստական խոսքի տարբեր դրսևորումները ըստ հեղինակի նպատակադրության -ներկայացնել երկխոսություն վարելու կարգը, պահպանել բարեկրթության նորմերը -Սովորեցնել մեջբերվող խոսքի կետադրությունը:
Վերջնարդյունքներ	- նկարագրել միևնույն իրադրությունը՝ գործածելով մեջբերվող խոսք -կազմել գիտական շարադրանք՝ կատարելով մեջբերումներ և քաղվածքներ զանազան աղբյուրներից -հեղինակային խոսքը մեջբերել ուղիղ կամ պատմողաբար - կամակերպել դերային խաղեր՝ երկխոսությունների կիրառումով
Շարահյուսություն: Շարահյուսության ուսումնասիրության միավորները	**Նպատակը՝** . զարգացնել շարահյուսության միավորների մասին իր գիտելիքները. ճանաչել տալ . բառը՝ որպես նախադասության անդամ, . ներկայացնել ա/ բառակապակցությունը՝ իր անվանողական արժեքով, բ/ նախադասությունը՝ իր հաղորդակցական արժեքով, բ/ տեքստը՝ իբրև կապակցված խոսք: **Վերջնարդյունք՝** . բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով կազմել նախադասություններ, . տրված բառերը վերածել երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ բառակապակցությունների, . կազմել անվանական և բայական բառակապակ-ցություններ,

		. անվանական և բայական բառակապակցությունները կիրառել նախադասություններում, . տեքստում գտնել բառակապակցությունները և որոշել տեսակը, . տրված նախադասություններն առանձնացնել ըստ հաղորդակցական արժեքի, . տրված բառակապակցությունները վերածել տեքստի:
Ժամ Թեմատիկ պլանավորում	**Էջ**	**Դաս**
2	**13-18**	Շարահյուսություն: Շարահյուսության ուսումնասիրության միավորները
Դերբայական դարձված. կառուցվածքը, շարադասությունն ու կետադրությունը		**Նպատակը՝** . դերբայական դարձվածի կառուցվածքը, շարադասությունը, կետադրությունը և շարահյուսական դերը իմանալու կարողություն-ների ձևավորում, . դերբայական դարձվածը կետադրելու և խոսքում կիրառելու հմտությունների զարգացում: **Վերջնարդյունք՝** . ճանաչի դերբայական դարձվածը և նրա շարադասությունը, . կարողանա կազմել նախադաություններ՝ դերբայական դարձվածը գործածելով տարբեր շարադասությամբ, և կետադրել:
1	**19-27**	Դերբայական դարձված. կառուցվածքը, շարադասությունն ու կետադրությունը
1	**19-22**	Դերբայական դարձված. կառուցվածքը
2	**22-27**	Դերբայական դարձվածի շարադասությունն ու կետադրությունը
1		Թեմայի ամփոփում
1		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
Բարդ նախադասությ		**Նպատակը՝**

ուն, նրա կառուցվածքը		. բարդ նախադասությունը ճանաչելու, բաղադրիչները թվարկելու կարողությունների ձևավորում, . բարդ նախադասության տեսակները տարբերակելու հմտությունների զարգացում, . բարդ նախադասություն կազմելու, խոսքում կիրառելու կարողությունների և հմտությունների զարգացում: **Վերջնարդյունք՝** . ճանաչել բարդ նախադասությունը, . տարբերակել բարդ նախադասության տեսակները, . թվարկել բաղադրիչ նախադասությունները և նրանց կապակցման եղանակները, . կազմել բարդ նախադասություններ և կիրառել խոսքում:
2	**28-30**	Բարդ նախադասություն, նրա կառուցվածքը
1	**31-34**	Նյութի ամրապնդում
Բարդ համադասական նախադասություն		**Նպատակը՝** . բարդ համադասական նախադասությունը ճանաչելու կարողությունների ձևավորում, . բարդ համադասական նախադասություն կազմելու, խոսքում կիրառելու կարողությունների և հմտությունների զարգացում, . բարդ համադասական նախադասությունը կետադրելու հմտությունների ձևավորում: **Վերջնարդյունք՝** . ճանաչել բարդ համադասական նախադասությունը, . թվարկել բարդ համադասական նախադասությունների բաղադրիչ

		նախադասությունները և նրանց կապակցման եղանակները, . կազմել բարդ համադասական նախադասություն-ներ և կիրառել խոսքում, . կետադրել բարդ համադասական նախադասությունները:
1	**34-40**	Բարդ համադասական նախադասություն. կառուցվածքը
2	**41-50**	Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցումը
3	**51-53**	Բարդ համադասական նախադասության կետադրությունը
2	**54-55**	Ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչումը բարդ համադասական նախադասություններում
1 Թեմատիկ պլանավորում		**Գործնական աշխատանք**
Բարդ ստորադասական նախադասություն	**62-92**	**Նպատակը՝** . բարդ ստորադասական նախադասությունը ճանաչելու կարողությունների ձևավորում, . բարդ ստորադասական նախադասություն կազմելու, խոսքում կիրառելու կարողությունների և հմտությունների զարգացում, . բարդ ստորադասական նախադասությունը կետադրելու հմտությունների ձևավորում: **Վերջնարդյունք՝** . ճանաչել բարդ ստորադասական նախադասությունը, . առանձնացնել գերադաս և ստորադաս նախադասությունները և նշել նրանց կապակցման եղանակները, . կազմել բարդ ստորադասական նախադասություններ և կիրառել խոսքում,

		. կետադրել բարդ ստորադասական նախադասությունները:
2	**62- 65**	Բարդ ստորադաս նախադասության գերադաս և ստորադաս նախադասություններ
2	**65-80**	Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը. ստորադասական շաղկապներն ու դրանց իմաստային հարաբերությունները
3	**81-87**	Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը. հարաբերական դերանուններ և հարաբերյալներ, դրանց կապակցման մի քանի կաղապար
1	**87- 90**	Անշաղկապ կապակցում. զեղչված շաղկապով բարդ ստորադասական նախադասության կետադրությունը
2	**90-92**	Ստորադաս նախադասության շարադասությունը և կետադրությունը
1		Թեմայի ամփոփում
1		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
1		Կիսամյակային կրկնություն
1		**Կիսամյակային գրավոր աշխատանք**
Մեջբերվող խոսք Թեմատիկ պլանավորում		**Նպատակը՝** . ըմբռնել մեջբերվող խոսքի հաղորդակցական բնույթը, . ընկալել մեջբերվող խոսքի բովանդակությունը ճիշտ վերարտադրելու կարևորությունը, . ձևավորել ուղղակի խոսքը անուղղակիի և հակառակը փոխակերպման կարողություններ, . ձևավորել մեջբերվող խոսքը կետադրելու կարողություններ և հմտություններ: **Վերջնարդյունք՝** . ըմբռնել մեջբերվող խոսքի հաղորդակցական բնույթը, . ճանաչել մեջբերվող խոսքը, . փոխակերպել ուղղակի խոսքը անուղղակիի և հակառակը, . ճիշտ կետադրել մեջբերվող խոսքը:

1	102 - 104	Մեջբերվող խոսք
2	104-106	Ուղղակի խոսք: Կառուցվածքը
3	104-106	Ուղղակի խոսք: Կետադրությունը
1	107-108	Անուղղակի խոսք
3	107-108	Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի
1	102-108	Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի
1		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
2	109-110, 124-127	Երկխոսություն և մենախոսություն: Երկխոսական տեքստի կետադրությունը
1	110-123	Երկխոսությունը առօրյա խոսքում և այլ բնագավառներում
Գործնական գրություններ		**Նպատակը՝** . իմանալ գործնական գրությունների իմացության անհրաժեշտությունը, . զարգացնել գործնական գրություններ/դիմում, արձանագրություն, հաշվետվություն/ գրելու կարողություններ և հմտություններ, . ճանաչել գործնական գրությունների գրառման ձև, կառուցվածք: Վերջնարդյունք՝ . տարբերակել գործնական գրությունների տեսակները, . կազմել գործնական գրություններ:
3		Գործնական գրություններ
1		**Թեմատիկ գրավոր աշխատանք**
3		Կիսամյակային կրկնություն
1		**Գործնական աշխատանք**
10		**Տարեվերջյան կրկնություն**
1		**Կիսամյակային գրավոր աշխատանք**

Դաս 1. Շարահյուսություն: Շարահյուսության ուսումնասիրության միավորները

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է ուսումնասիրում շարահյուսությունը:

2. Որո՞նք են շարահյուսության ուսումնասիրության միավորները:

3. Ինչպիսի՞ բառակապակցություններ կան:

4. Ինչո՞վ են տարբերվում բառակապակցությունները նախադասություններից:

5. Ի՞նչ է տեքստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ինչ է ուսումնասիրում շարահյուսությունը:

2.Շարահյուսության ուսումնասիրության միավորներն են բառը, բառակապակցությունը, նախադասությունը և տեքստը:

3.Բառակապակցությունները լինում են անվանական և բայական, երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ:

4.Նախադասությունը բառակապակցությունից տարբերվում է նրանով, որ առաջինը ունի հաղորդակցական արժեք:

5.Տեքստը կապակցված խոսք է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել՝ ինչ է ուսումնասիրում շարահյուսությունը:

2.Թվարկել շարահյուսության ուսումնասիրության միավորները՝ բառը, բառակապակցությունը, նախադասությունը և տեքստը:

3. Տարբերակել անվանական և բայական, երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ բառակապակցությունները:

4. Տրված բառակապակցություններով կազմել հաղորդակցական տարբեր բնույթի նախադասություններ:

5. Տրված նախադասությունները ճիշտ հաջորդականությամբ դասավորելով՝ ստանալ տեքստ:

Դաս 2. Դերբայական դարձված. կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր բառակապակցությունն է կոչվում դերբայական դարձված:
2. Ի՞նչ կառուցվածք ունի դերբայական դարձվածը:
3. Ո՞ր դերբայներով է ձևավորվում դերբայական դարձվածը:
4. Ո՞րն է դերբայական դարձվածի գերադաս անդամը:
5. Ի՞նչ պաշտոններ կարող է կատարել դերբայական դարձվածը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նախադասության մեջ գործածված դերբայը իր լրացում/ներ/ով կոչվում է դերբայական դարձված:
2. Դերբայական դարձվածի կառուցվածքը:
3. Դերբայական դարձվածը ձևավորվում է բոլոր անկախ դերբայներով՝ անորոշ, ենթակայական, հարակատար և համակատար:
4. Դերբայական դարձվածի գերադաս անդամը անկախ դերբայն է:
5. Դերբայական դարձվածը նախադասության մեջ մեկ անդամ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Սահմանել՝ ինչ է դերբայական դարձվածը:
2. Ներկայացնել դերբայական դարձվածի կառուցվածքը:
3. Թվարկել դերբայական դարձվածը ձևավորվող բոլոր անկախ դերբայները՝ անորոշ, ենթակայական, հարակատար և համակատար և բերել օրինակներ:
4. Ճանաչել դերբայական դարձվածի գերադաս անդամը:
5. Որոշել դերբայական դարձվածի շարահյուսական պաշտոնը:

Դաս 3. Դերբայական դարձվածի շարադասությունն ու կետադրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ շարադասություն ունի դերբայական դարձվածը:

2. Ո՞ր դերբայական դարձվածներն են տրոհվող:

3. Ո՞ր դերբայական դարձվածներն են չտրոհվող:

4. Ինչպե՞ս են կետադրվում նախադաս և վերջադաս դերբայական դարձվածները:

5. Ինչպե՞ս է կետադրվում միջադաս դերբայական դարձվածը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դերբայական դարձվածի շարադասությունը:

2. Սովորաբար տրոհվում են անորոշ և հարակատար դերբայներով ձևավորված դերբայական դարձվածները, որոնք բայական անդամի լրացումներ են:

3. Հիմնականում չեն տրոհվում համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածները:

4. Նախադաս և վերջադաս դերբայական դարձվածները կետադրվում են բութով:

5. Միջադաս դերբայական դարձվածը կետադրվում է երկկողմանի ստորակետերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել դերբայական դարձվածի շարադասությունը:

2. Ներկայացնել՝ սովորաբար տրոհվում են անորոշ և հարակատար դերբայներով ձևավորված դերբայական դարձվածները, որոնք բայական անդամի լրացումներ են:

3. Նշել՝ հիմնականում չեն տրոհվում համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածները:

4. Կետադրել նախադաս և վերջադաս դերբայական դարձվածներով նախադասությունները:

5. Տրված օրինակներում գտնել միջադաս դերբայական դարձվածները և կետադրել:

Դաս 4. Բարդ նախադասություն, նրա կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր նախադասությունն է կոչվում բարդ:
2. Ո՞րն է պարզ և բարդ նախադասությունների տարբերությունը:
3. Քանի՞ ստորոգյալ կարող է ունենալ բարդ նախադասությունը:
4. Նվազագույնը քանի՞ նախադասությունից է կազմված բարդ նախադասությունը:
5. Ինչո՞վ են կապակցվում բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ է մեկից ավելի պարզ նախադասություններից կազմված նախադասությունը:
2. Պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքային տարբերությունը:
3. Բարդ նախադասությունը ունի մեկից ավելի ստորոգյալներ:
4. Բարդ նախադասությունը կազմված է նվազագույնը երկու պարզ նախադասությունից:
5. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցվում են շաղկապներով, հարաբերական դերանուններով կամ առանց դրանց /շարահարությամբ/:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Սահմանել՝ ինչ է բարդ նախադասությունը:
2. Տեքստում գտնել պարզ և բարդ նախադասությունները:
3. Նշել բարդ նախադասության ստորոգյալները:
4. Թվարկել բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:
5. Ներկայացնել բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցման եղանակները /շաղկապներով, հարաբերական դերանուններով կամ առանց դրանց/:

Դաս 5. Բարդ համադասական նախադասություն. կառուցվածքը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր նախադասությունն է կոչվում բարդ համադասական:

2. Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադաասությունները ի՞նչ են կոչվում:

3. Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասություններն ինչպիսի՞ն կարող են լինել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ համադասական է կոչվում այն նախադասությունը, որի բաղադրիչ նախադասությունները համազոր են կամ համադաս:

2. Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադաասությունները կոչվում են համադաս նախադասություններ:

3. Բարդ համադասական նախադասության համադաս նախադասություններն կարող են լինել երկկազմ, միակազմ, և՛ միակազմ, և՛ երկկազմ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Սահմանել բարդ համադասական նախադասությունը:

2. Ճանաչել համադաս նախադասությունները:

3. Որոշել համադաս նախադասությունների տեսակները:

Դաս 6. Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցումը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս են կապակցվում բաղադրիչ համադաս նախադասությունները բարդ համադասական նախադասություններում:

2. Ո՞ր շաղկապներով են կապակցվում բաղադրիչ համադաս նախադասությունները:

3. Ո՞րն է համադասական շաղկապների դերը:

4. Ի՞նչ է արտահայտում հնչերանգը բարդ համադասական նախադասություններում:

5. Հնչերանգով կապակցումը առավել բնորոշ է գրավո՞ր, թե՞ բանավոր խոսքին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ նախադասությունները կապակցվում են երկու ձևով՝ համադասական շաղկապներով և շարահարությամբ:

2. Բաղադրիչ համադաս նախադասությունները կապակցվում համադասական շաղկապներով:

3. Համադասական շաղկապների դերը համադաս անդամների ու նախադասությունների կապակցումն է:

4. Բարդ համադասական նախադասություններում հնչերանգը արտահայտում է թվարկում և հակադրություն:

5. Հնչերանգով կապակցումը առավել բնորոշ է բանավոր խոսքին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմել շաղկապավոր և անշաղկապ կապակցմամբ բարդ համադասական նախադասություններ:

2. Տարբերակել համադասական շաղկապներով և շարահարությամբ կապակցված նախադասությունները:

3. Ներկայացնել բաղադրիչ նախադասություններում համադասական շաղկապների կապակցման դերը:

4. Նշել բազմաբաղադրիչ նախադասություններում հնչերանգի դրսևորումը:

5. Սահմանել՝ որ խոսքին է առավել բնորոշ հնչերանգով կապակցումը:

Դաս 7. Բարդ համադասական նախադասության կետադրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս են կետադրվում համադասական շաղկապներով միացած համադաս նախադասությունները:

2.Ինչպե՞ս են կետադրվում ***և, ու, կամ*** շաղկապներով միացած համադաս նախադասությունները, որոնք ունեն տարբեր ենթականեր:

3. Ինչպե՞ս ենք վարվում այն դեպքում, եթե ***և, ու, կամ*** շաղկապները կապում են ընդհանուր ենթակայով նախադասություններ:

4. Ինչպե՞ս են կետադրվում ***կրկնադիր*** շաղկապներով միացած համադաս նախադասությունները:

5. Ինչպե՞ս ենք վարվում այն ժամանակ, երբ համադաս նախադասությունները կապակցված են առանց շաղկապի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Համադասական շաղկապներից առաջ դրվում է ստորակետ:

2. Տարբեր ենթականեր ունեցող համադաս նախադասությունները կապող ***և, ու, կամ*** շաղկապներից առաջ դրվում է ստորակետ:

3. Ընդհանուր ենթակայով համադաս նախադասությունները կապող ***և, ու, կամ*** շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում:

4. Կրկնադիր շաղկապները հիմնականում շեշտվում են, և դրանցից առաջ դրվում է ստորակետ:

5. Անշաղկապ կապակցման դեպքում համադաս նախադասությունները միմյանցից անջատվում են ստորակետով կամ միջակետով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել և կետադրել շաղկապներով միացած համադաս նախադասությունները:

2. Կետադրել տարբեր ենթականերով նախադասությունները, որոնք կապ են ***և, ու, կամ*** շաղկապներով:

3. Առանձնացնել ***և, ու, կամ*** շաղկապներով միացած ընդհանուր ենթակայով նախադասությունները և բացատրել կետադրության բացակայությունը:

4. Նշել կրկնադիր շաղկապներով համադաս նախադասությունը և կետադրել:

5. Կետադրել շարահարությամբ կապակցված համադաս նախադասությունները:

Դաս 8. Ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչումը բարդ համադասական նախադասություններում

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Բարդ համադասական նախադասություններում քանի՞ ձևով է զեղչվում ստորոգյալը:

2. Ո՞ր ստորոգյալներն են մասամբ զեղչվում:

3. Ո՞ր ստորոգյալն է ամբողջությամբ զեղչվում:

4. Ինչ՞ կետադրական նշան է դրվում ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալների փոխարեն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ համադասական նախադասության ստորգյալը կարող է զեղչվել ամբողջովին կամ մասամբ:

2. Մասամբ զեղչվում են և՛ պարզ, և՛ բաղադրյալ ստորոգյալները:

3. Ամբողջովին զեղչվում են պարզ ստորոգյալները:

4. Ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալների փոխարեն դրվում է բութ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալները:

2. Բնագրում գտնել մասամբ զեղչված ստորոգյալները:

3. Նախադասություններում վերականգնել ամբողջովին զեղչված ստորոգյալները:

4. Կետադրել ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալներով նախադասությունները:

Դաս 9. Բարդ ստորադաս նախադասության գերադաս և ստորադաս նախադասություններ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞րն է կոչվում բարդ ստորադասական նախադասություն:

2. Ի՞նչ կազմություն ունի բարդ ստորադասական նախադասությունը:

3. Ինչպե՞ս են կոչվում բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները:

4. Ո՞ր նախադասությունն է կոչվում գերադաս:

5. Ո՞ր նախադասությունն է կոչվում ստորադաս:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ ստորադասական է այն նախադասությունը, որի կազմի մեջ մտնող պարզ նախադասություններից մեկը գերադաս է, իսկ մյուսը լրացնում է գերադասի միտքը:

2. Բարդ ստորադասական նախադասությունը կազմված է առնվազն երկու նախադասությունից:

3. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կոչվում են գերադաս և ստորադաս:

4. Գերադաս է այն նախադասությունը, որն ունի իրեն լրացնող ստորադաս նախադասություն:

5. Ստորադաս է այն նախադասությունը, որը լրացնում է գերադասի միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել բարդ ստորադասական նախադասությունը:

2. Տարբերել գերադաս և ստորադաս նախադասությունները:

3. Կազմել բարդ ստորադասական նախադասություններ:

4. Տրված գերադաս նախադասությանը ավելացնել ստորադաս նախադասություն:

5. Առանձնացնել գերադաս և ստորադաս նախադասությունները:

Դաս 10. Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը. ստորադասական շաղկապներն ու դրանց իմաստային հարաբերությունները

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որո՞նք են գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցման միջոցները:
2. Որո՞նք են ստորադասական շաղկապները:
3. Կարո՞ղ են ստորադասական շաղկապները նախադասության անդամ դառնալ:
4. Քանի՞ տեսակ են լինում ստորադասական շաղկապները:
5. Ի՞նչ պաշտոն կարող է կատարել ստորադաս նախադասությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գերադաս և ստորադաս նախադասությունները միմյանց կապակցվում են ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով, շարահարությամբ:
2. Որոնք են ստորադասական շաղկապները:
3. Ստորադասական շաղկապները նախադասության անդամ չեն դառնում:
4. Ստորադասական շաղկապները լինում են մենադիր և զուգադիր:
5. Ստորադաս նախադասությունը ինչ պաշտոններ կարող է կատարել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել՝ ինչպես են կապակցվել գերադաս և ստորադաս նախադասությունները:
2. Ճանաչել ստորադասական շաղկապները:
3. Սահմանել, որ ստորադասական շաղկապները նախադասության անդամ չեն կարող դառնալ:
4. Կազմել բարդ ստորադասական նախադասություններ մենադիր և զուգադիր շաղկապներով:
5. Թվարկել ստորադաս նախադասությունների մի քանի պաշտոններ:

Դաս 11. Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը. հարաբերական դերանուններ և հարաբերյալներ, դրանց կապակցման մի քանի կաղապար

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ստորադասական շաղկապներից բացի ուրիշ ի՞նչ եղանակով կարող են կապակցվել գերադաս և ստորադաս նախադասությունները:

2. Որո՞նք են հարաբերական դերանունները և ի՞նչ դեր են կատարում:

3. Ո՞ր բաղադրիչ նախադասության մեջ կարող է լինել հարաբերյալ:

4. Ո՞ր դերանունները կարող են հանդես գալ որպես հարաբերյալներ:

5. Երկրորդական նախադասությունը ի՞նչ կապ ունի հարաբերյալի հետ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ ստորադասական նախադասություններում գերադասը ստորադասին կապակվցում են նաև հարաբերական դերանուններով:

2. Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են, որոնք ոչ թե հարցում են արտահայտում, այլ կապում են գերադաս և ստորադաս նախադասությունները:

3. Հարաբերյալը կարող է լինել գերադաս նախադասության մեջ:

4. Որպես հարաբերյալներ մեծ մասամբ հանդես են գալիս ցուցական դերանունները:

5. Հարաբերյալն ու երկրորդական նախադասությունը նույն պաշտոնն են կատարում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել հարաբերական դերանուններով կապակցված բարդ ստորադասական նախադասությունները:

2. Թվարկել որոշ հարաբերական դերանուններ և դրանցով կազմել բարդ ստորադասական նախադասություններ:

3. Նշել գերադաս նախադասության մեջ առկա հարաբերյալը:

4. Նախադասություններում առանձնացնել որպես հարաբերյալներ հանդես եկած մի քանի ցուցական դերանուններ:

5. Կազմել նախադասություններ տրված հարաբերյալ-հարաբերական կապակցական կաղապարներով:

Դաս 12. Անշաղկապ կապակցում. զեղչված շաղկապով բարդ ստորադասական նախադասության կետադրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր ստորադասական շաղկապներն են զեղչվում:
2. Ի՞նչ կետադրական նշան է դրվում զեղչված ստորադասական շաղկապների փոխարեն:
3. Ո՞ր հարաբերական դերանունն է զեղչվում բարդ ստորադասական նախադասություններում:
4. Ի՞նչ կետադրական նշան է դրվում զեղչված հարաբերական դերանվան փոխարեն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարդ ստորադասական նախադասություններում կարող են զեղչվել ***որ, թե, եթե*** շաղկապները:

2. Զեղչված ստորադասական շաղկապների փոխարեն դրվում է բութ:

3. Բարդ ստորադասական նախադասություններում կարող է զեղչվել ***ինչ*** հարաբերական դերանունը:

4. Զեղչված հարաբերական դերանվան փոխարեն դրվում է բութ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել այն ստորադասական շաղկապները, որոնք կարող են զեղչվել:
2. Կետադրել զեղչված ստորադասական շաղկապներով նախադասությունները:
3. Նախադասություններում վերականգնել զեղչված ստորադասական շաղկապները:
4. Կետադրել զեղչված հարաբերական դերանունով նախադասությունները:

Դաս 13. Ստորադաս նախադասության շարադասությունը և կետադրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ դիրք կարող է ունենալ ստորադաս նախադասությունը գերադասի նկատմամբ բարդ ստորադասական նախադասություններում:
2. Ինչպե՞ս է տրոհվում ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությունից:
3. Ո՞ր դեպքում են գերադաս և ստորադաս նախադասությունները անջատվում բութով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ստորադաս նախադասությունը գերադասի նկատմամբ կարող է լինել նախադաս, միջադաս, վերջադաս:
2. Ստորադաս նախադասությունը գերադասից տրոհվում է ստորակետով:
3. Ձեղչված շաղկապի կամ դերանվան փոխարեն դրվում է բութ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել ստորադաս նախադասության դիրքը գերադասի նկատմամբ:
2. Ներկայացնել ստորադաս նախադասության կետադրությունը:
3. Կետադրել բարդ ստորադասական նախադասությունները:

Դաս 8. Մեջբերվող խոսք Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչո՞վ են տարբերվում գրավոր և բանավոր խոսքերը:
2. Ի՞նչ է մեջբերվող խոսքը:
3. Ինչպե՞ս կարող է ներկայացվել մեջբերվող խոսքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրավոր և բանավոր խոսքերի դրսևորման առանձնահատկությունները:
2. Մեջբերվող խոսքի նկարագիրը:
3. Մեջբերվող խոսքի դրսևորման երկու եղանակները՝ ուղղակի և անուղղակի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել գրավոր և բանավոր խոսքերի տարբերությունները:
2. Տեքստում ճանաչել և առանձնացնել մեջբերվող խոսքը /մեկ-երկու նախադասություն/:
4. Տեքստում գտնել և տարբերակել ուղղակի և անուղղակի մեջբերվող խոսքերը /մեկ-երկու նախադասություն/:

Դաս 9. Ուղղակի խոսք Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է ուղղակի խոսքը:
2. Ի՞նչ կառուցվածք ունի ուղղակի խոսքը:
3. Ի՞նչ դիրք ունի հեղինակի խոսքն ուղղակի խոսքի նկատմամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուղղակի խոսքի արտահայտման ձևը:
2. Ուղղակի խոսքի կառուցվածքը:
3. Հեղինակի խոսքի դիրքը ուղղակի խոսքի նկատմամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տեքստում գտնել և առանձնացնել ուղղակի խոսքով նախադասությունները:
2. Նախադասության մեջ առանձնացնել հեղինակի և ուղղակի խոսքերը:
3. Օրինակներում գտնել հեղինակի խոսքը և որոշել դիրքը:

Դաս 10. Ուղղակի խոսք: Կետադրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս է կետադրվում ուրիշի ուղղակի խոսքը:
2. Ինչպե՞ս է կետադրվում բարձրաձայն հնչվող ուղղակի խոսքը՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի:
3. Ինչպե՞ս է կետադրվում մտքում ասվող կամ հիշվող ուղղակի խոսքը՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուրիշի ուղղակի խոսքի կետադրման տարբերակները/ մեկ-երկու տարբերակ/:

2.Բարձրաձայն հնչվող ուղղակի խոսքի կետադրության տարբերակները՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի/ մեկ-երկու տարբերակ/:

3. Մտքում ասվող կամ հիշվող ուղղակի խոսքի կետադրության տարբերակները՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի / մեկ-երկու տարբերակ/:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել ուրիշի ուղղակի խոսքի կետադրման տարբերակները / մեկ-երկու տարբերակ/:

2. Կետադրել բարձրաձայն հնչվող ուղղակի խոսքը՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի/մեկ-երկու տարբերակ/:

3. Կետադրել մտքում ասվող կամ հիշվող ուղղակի խոսքը՝ ըստ հեղինակի խոսքի դիրքերի/ մեկ-երկու տարբերակ/:

Դաս 11. Անուղղակի խոսք Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է անուղղակի խոսքը:

2 . Ի՞նչ կառուցվածք ունի անուղղակի խոսքը:

3. Ինչպիսի՞ նախադասություն է անուղղակի խոսքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ինչ է անուղղակի խոսքը:

2. Անուղղակի խոսքի կառուցվածքը:

3. Ինչպիսի նախադասություն է անուղղակի խոսքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել՝ ինչ է անուղղակի խոսքը:

2. Ներկայացնել անուղղակի խոսքի կառուցվածքը:

3. Տեքստում գտնել և առանձնացնել անուղղակի խոսքով նախադասությունները /մեկ-երկու նախադասություն/:

Դաս 12. Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ փոփոխություններ են կատարվում ուղղակի խոսքը անուղղակի խոսքի փոխակերպելիս:
2. Ի՞նչ կառուցվածք ունի փոխակերպված անուղղակի խոսքը:
3. Կետադրական ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուղղակի խոսքի փոխակերպման առանձնահատկությունները:
2. Փոխակերպված անուղղակի խոսքի կառուցվածքը:
3. Փոխակերպմանն անհրաժեշտ կետադրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի:
2. Բացատրել փոխակերպված անուղղակի խոսքի կառուցվածքը:
3. Կետադրել փոխակերպված նախադասությունները:

Դաս 13. Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակի խոսքի: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1.Ի՞նչ փոփոխություններ են կատարվում փոխակերպման ժամանակ:

2.Փոխակերպելիս ո՞ր դեպքում է գործածվում ***որ*** շաղկապը:

3. Փոխակերպելիս ո՞ր դեպքում է գործածվում ***թե*** շաղկապը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Փոխակերպման ժամանակ կատարվող փոփոխությունները:

2. Փոխակերպելիս որ դեպքում է գործածվում ***որ*** շաղկապը:

3. Փոխակերպելիս որ դեպքում է գործածվում ***թե*** շաղկապը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվել փոխակերպման ժամանակ կատարվող որոշ փոփոխություններ:

2. Նշել փոխակերպելիս որ դեպքում է գործածվում ***որ*** շաղկապը:

3. Նշել փոխակերպելիս որ դեպքում է գործածվում ***թե*** շաղկապը:

Դաս 14. Երկխոսություն և մենախոսություն: Երկխոսական տեքստի կետադրությունը:

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որո՞նք են խոսքի դրսևորման ձևերը:
2. Ի՞նչ է երկխոսությունը:
3. Խոսքի դրսևորման ո՞ր ձևին են մասնակցում խոսողն ու լսողը:
4. Ինչպե՞ս է կետադրվում երկխոսական տեքստը:
5. Ի՞նչ է մենախոսությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խոսքի դրսևորման ձևերը:
2. Ինչ է երկխոսությունը:
3. Խոսքի դրսևորման որ ձևին են մասնակցում խոսողն ու լսողը:
4. Երկխոսական տեքստի կետադրությունը:
5. Ինչ է մենախոսությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել խոսքի դրսևորման ձևերը:
2. Բացատրել՝ ինչ է երկխոսությունը:
3. Նշել՝ խոսքի դրսևորման որ ձևին են մասնակցում խոսողն ու լսողը:
4. Կետադրել տրված երկխոսական տեքստը:
5. Բացատրել՝ ինչ է մենախոսությունը:

Դաս 15. Երկխոսությունը առօրյա խոսքում և այլ բնագավառներում: [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ կառուցվածք ունի երկխոսությունը:
2. Ո՞րտեղ է ավելի հաճախ գործածվում երկխոսությունը:
3. Ուրիշ ի՞նչ բնագավառներում է գործածվում երկխոսությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկխոսության կառուցվածքը:
2. Որտեղ է ավելի հաճախ գործածվում երկխոսությունը:
3. Երկխոսության գործածությունը այլ բնագավառներում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել երկխոսության կառուցվածքը:
2. Նշել՝ որտեղ է ավելի հաճախ գործածվում երկխոսությունը:
3. Թվել երկխոսության գործածության այլ բնագավառները:

Դաս 16. Գործնական գրություններ: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է գործնական գրությունը:
2. Գործնական գրության ի՞նչ տեսակներ գիտես:
3. Ի՞նչ կառուցվածք ունի դիմումը:
4. Ո՞ր փաստաթուղթն է կոչվում արձանագրություն:
5. Ո՞ր փաստաթուղթն է կոչվում հաշվետվություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ինչ է գործնական գրությունը:
2. Գործնական գրության տեսակները:
3. Դիմումի կառուցվածքը:
4. Որ փաստաթուղթն է կոչվում արձանագրություն:
5. Որ փաստաթուղթն է կոչվում հաշվետվություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել՝ ինչ է գործնական գրությունը:
2. Թվարկել գործնական գրության տեսակները:
3. Նշել դիմումի կառուցվածքը:
4. Բացատրել՝ որ փաստաթուղթն է կոչվում արձանագրություն:
5. Մտաբերել՝ որ փաստաթուղթն է կոչվում հաշվետվություն: